# Աղվես գնաց, մտավ ջաղաց

# Aghves gənats', mətav jaghats'




1. Աղվես գընաց, մըտավ ջաղաց,
   Թաթեր վերուց մի բոլ խաղաց:
   *Հարա՛յ, ա՛ղվես, պարո՛ն աղվես,*
   *Աշխարհքի մեջ չըկա քու պես:*

2. Մի կոտ ու կես կորեկ աղաց,
   Էն էլ շալակն առավ, գընաց:
   *Հարա՛յ, ա՛ղվես...*

3. Աղվես կերավ գեղի հավեր,
   Փարվեզ տըվավ վերի կալեր:
   *Հարա՛յ, ա՛ղվես...*

4. Աղվես պառկե բըրչոտ կողին,
   Թաթեր դըրե սիպտակ հողին:
   *Հարա՛յ, ա՛ղվես...*

5. Ասի՝ բըռնենք կուզ ու աղվես,
   Աշունք կարգեմ իմ Օհանես:
   *Հարա՛յ, ա՛ղվես...*

6. Էլ գին չարավ էլ տարվա պես,–
   Ազապ մընաց իմ Օհանես:
   *Հարա՛յ, ա՛ղվես...*

1. Aghves gənats', mətav jaghats',
   T'at'er veruts' mi bol khaghats'.
   *Haray, aghves, paron aghves,*
   *Ashkhark'i mech' ch'əka k'u pes.*

2. Mi kot u kes korek aghats',
   En el shalakn arrav, gənats'.
   *Haray, aghves...*

3. Aghves kerav geghi haver,
   P'arvez təvav veri kaler.
   *Haray, aghves...*

4. Aghves parrke bərch'ot koghin,
   T'at'er dəre siptak hoghin.
   *Haray, aghves...*

5. Asi bərrnenk' kuz u aghves,
   Ashunk' kark'em im Ohanes.
   *Haray, aghves...*

6. El gin ch'arav el tarva pes,–
   Azap mənats' im Ohanes.
   *Haray, aghves...*